

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2015թ. օգոստոսի 24-ի
նիստի /արձանագրություն N 10/

1. Շինվերանորոգման աշխատանքների կատարման ընթացքի մասին Հ. Մինասյանի զեկույցն ընդունելի գիտություն,
 - 1.1 հանձնարարել Հ. Մինասյանին առաջիկայում ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ, որոնք կապահովեն կինոֆակուլտետում գործածվող տեխնիկական միջոցների անխափան աշխատանքը՝ կապված եղանակային փոփոխությունների հետ:
2. Հանձնարարել ինստիտուտի գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին հնգօրյա ժամկետում նախապատրաստել և հաստատման ներկայացնել ինստիտուտի պրոֆետորադասախոսական տարակարգերի աշխատավարձերի բարձրացման նախագիծը:
3. Ուսումնական գծով աշխատանքների նախապատրաստման ընթացքը համարել բավարար:
4. ՀՀ ԿԳՆ-ի կողմից քննարկման ներկայացված մասնագիտությունների ցանկի համապատասխանեցման նախագիծը համարել ընդունելի և հանձնարարել ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն. Սարգսյանին պատրաստել համապատասխան նամակ՝ նախարարությանը:
5. Ինստիտուտի հավատարմագրման գործընթացի կազմակերպման աշխատանքների ընթացքի վերաբերյալ Հ. Ավագյանի հաղորդումն ընդունելի գիտություն,
 - 5.1 հավատարմագրման գործընթացը արագացնելու նպատակով հանձնարարել Հ. Ավագյանին առաջիկայում դեկանների և պրոռեկտորների հետ համատեղ կազմակերպել խորհրդատվություն հրավիրված մասնագետի հետ,
 - 5.2 ս.թ. սեպտեմբերի 1-ից ինստիտուտի կառուցվածքում ավելացնել նոր ստորաբաժանում «Միջազգային կապերի և շարունակական կրթության բաժին» անվանմամբ,

5.2.1 Միջազգային կապերի և շարունակական կրթության բաժինը ներառել միջբուհական, միջազգային համագործակցության և բարեփոխումների գծով պրոռեկտորի ենթակայության ներքո:

6. Ս.թ. սեպտեմբերի 1-ից ինստիտուտի նախապատրաստական բաժնում՝ ըստ մասնագիտությունների, սահմանել ուսման տարեկան վարձի հետևյալ չափաքանակները.

- Դերասանական արվեստ – 250.000 դրամ
- Ռեժիսուրա – 300.000 դրամ
- Կինոարվեստ – 300.000 դրամ
- Օպերատորություն – 220.000 դրամ
- Թատերագիտություն, կինոգիտություն, գրական ստեղծագործություն – 200.000 դրամ
- Գեղանկարչություն – 300.000 դրամ

6.1 նախապատրաստական բաժնի աշխատանքները բարելավելու նպատակով ս.թ. սեպտեմբեր ամսին հրավիրել խորհրդակցություն:

7. Հանձնարարել ամբիոնների վարիչներ Ռ. Բաբայանին և Ա. Մելիքսեթյանին կազմակերպել սեպտեմբերի 1-ի կապակցությամբ նախատեսվող թատերակայնացված միջոցառումը,

7.1 Արհկոմի նախագահ Հ. Ավագյանի առաջիկա լիազորությունների դադարացման մասին հայտարարությունն ընդունել ի գիտություն և նոր ընտրություններ անցկացնելու նպատակով սեպտեմբեր ամսին հրավիրել կոլեկտիվի ժողով,

7.2 հանձնարարել ինստիտուտի ուսումնական ստորաբաժանումներին մինչև օգոստոսի 27-ը ավարտել և ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացնել պահանջված ձևի հաշվետվությունը: